



#### 105. ՀԱՎԱՏԱՐԻՄ ԿՆԻԿԸ

Ըլլմ ա, չըլլմ, մի թաքավոր ա ըլլմ: Օրից մի օր դա շորերը փոխում ա, իրա քաղքումը ծպտված ման ա զալի: Մի քշեր էլ տենում ա քաղքի դրադին մի լիս:

Գնում ա, ինչ տենա, տան մեջ մի մարդ ու կնիկ, տունը դափ-դատարկ: Մարդն ա նստում տարուրետկին՝ կնիկն ա գլուխը դնում մարդու ծնգներին քնում, կնիկն նստում՝ մարդն ա գլուխը դնում կնդա ծնգներին քնում:

Թաքավորը էդ կնգանը մարդու քնած վախտը հարցնում ա.— Ի՞նչ ունես ըստի:

Կնիկն ասում ա.— Բա ի՞նչ անեմ, ընդեղ եմ՝ քաշում եմ:

— Թաքավորի կնիկ կդառնաս,— ասում ա թաքավորն ու գնում:

Կնիկը քշերը մարդին սպանում ա, ուսկոզը գնում ա թաքավորի կուշտը, թե սհենց ու սհենց, հմի էլ ուզում եմ թաքուհի դառնամ, չունքի թաքավորի սիրտը թհենց ա ուզում:

Թաքավորը զայրանում ա, դրան սպանիլ ա տալի ու հրամայում, որ ինչքան կնիկ կա սպանեն, մի տմաղլըղ չթողան: Շուք ու շիվանն ընգնում ա քաղաքը:

Թաքավորի ջահել նազիրը գնում ա իրանց տունը, հորը պատմում, թե թաքավորը սհենց հրաման տվուց: Դրա հերն էլ մի վախտ թաքավորի հոր նազիրն ա էլած ըլլմ:

Տղին ասըմ ա թե.— Հրամալի թող ինչքան կնիկ կա, տապ անեն, տանիցը դուս չգան:

Շատ ա անց կենըմ, քիչ, թաքավորն սկսըմ ա մտածիլը, հենց իմանըմ ա իրա երգըմը է՛լ կնիկ չկա:

Մի օր էլ թաքավորի նազիրն ասըմ ա, թե.— Հերս ուղըմ ա հետդ խոսա:

Թաքավորը շատ ա ուրախանըմ, որ իրա հոր նազիրը, որ մի անդին մարդ ա, կգա հետը կխոսա, սիրտը մի քիչ կհոկանա:

Ասըմ ա.— Ասեք, թող գա:

Նաղրի հերը գալիս ա, գեսից-դենից խոսըմ են, ըժում թաքավորի հոր նազիրը մի պատմութիւն ա անըմ.

— Մի քշեր տունը քնած ի, մին էլ մի ձեն ընգավ անգաճս, ռփահլիւն, հե՛յ, դուս արի»: Ուզըմ ի կիսատկոր դուս գամ, կնիկըս ասավ.— Այ մարդ, զենքերդ վեկալ:

Հլեդ էկա քնեցի: Մը քիչ եղը մին էլ լսեցի. ռփահլիւն, դուս արի»:

Ճարս ինչ, գուրզս վեկալա, զենքերս կապեցի, դուս էկա: Տենամ մի զարիւր մարդ ձիուն նստած: Դա թե՛ ռիմ եղնա արի»:

Գնըմ եմ ու կասկածըմ, որ էդ զարիւր մարդը օրանա շուրմը կարող ա ինձ սպանի էլ:

Ճամփի կիսին գուրզս շարտեցի, որ դրան սըպանեմ: Դա բռնեց, եդ շարտեց՝ թե հանաք մի անի: Մըքիչ գնալուց եղը գուրզս հլեդ շարտեցի, դա բռնեց ու շարտեց՝ թե հանաք մի անի:

Շատ գնացինք, քիչ, մութ քշեր էր, ինչ տի հսկանեի, հասանք մի մենձ քարափի: Դա ասավ.— Ըստի քառասուն դեեր են ապրըմ, նրանցից ինատ ունեմ հանելու, քարափին սեպեր խփի, բրցրանամ, գնամ ինատս հանեմ ու գամ:

Կարացի ոչ սեպերը լիքը խուրջինը իրա ձիու վրիցը վեր բերեմ: Ինքը վեր բերուց, սեպերը ձեռով քարափին խփելեն բցրացավ, ինձ էլ պատվիրեց.— Ես կգնամ, թե մենակ ծուխ բցրանա՝ ես չկամ, ձին՝ քեզ, իսկ եթե ծուխ բցրանա, հետն էլ քարափիցն արին գա՝ ես կամ, ճամփա կպահես:

Մըքիչ եղը ինչ տենամ, մի ծուխ ա բցրացել, մի ծուխ, որ սար ու ձոր լքցրել, հետն էլ արինը ֆշշալեն, սելավի պես քարափիցը թափվըմ ա: Զարմանքից քար կտրեցի: Մին էլ տենամ էդ զարիւր մարթը էկավ, թե.— Քառասուն դեերին սըպանեցի, սիրտս հովացավ, գնանք:

Գնացինք, գնացինք, հասանք մի գերեզմանաքարի, վրեն էր-

կու հոգու անըմ: Դա քարը բմբլի պես բցրացրուց, թուրը տվուց ինձ.  
գոշը բաց արավ, թե.— Ախպերացու, ինձ սպանի:

Աչքերիս հվատացի ոչ, տեր աստված, էս ինչ բան ա, իսկա-  
կան կնիկ:

Ասավ.— Բա շես ասիլ, էդ քառասուն դեկրը իմ մարթին սը-  
պանեցին, էս քարի տակը թաղեցի ու երթվեցի՝ մարթիս ինատը  
հանեմ ու ինքս էլ գնամ նրա կուշտը:

էդ ասիլը տեհա, մին էլ բիրդան իրա թուրը կոթի կռնիցը տըն-  
գեց գեղնին ու դոշի վրա ընգավ վրին, մեռավ: Մեռավ, դրան իրա  
մարթի կողքին թաղեցի, քարը հլեզ տեղը դրի:

Թաքավորի հոր նազիրն էս պատմութիւնը անըմ ա ու ասըմ.—  
Բա՛, թաքավորն ապրած կենա, սհենց կնիկ էլ ա ըլլմ:

Թաքավորը ֆոքոց ա քաշըմ ու ասըմ.— Ի՞նչ օգուտ, ինչքան  
կնիկ կար, սըպանեցինք:

— Չէ՛, թաքավորն ապրած կենա, հեշ մի կնիկ էլ սըպանված  
չի,— ասըմ ա նազրի հերն ու պատմըմ, թե՛ գործը ոնց ա էլել:

Թաքավորը շատ ա ուրախանըմ:

Երգնքիցը իրեք խնձոր վեր ընդնի: Մինը՝ ասողին, մինը՝ լսո-  
ղին, մինն էլ՝ հավատարիմ կնգանը:

